բավա-րարման:

6. Դատական ծախսեր.

ՔԴՕ 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՔԴՕ 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, գործի քննության հետ կապված այլ ծախսեր են գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները:

ՔԴՕ 108-րդ հոդվածի համաձայն.

«1. Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

2. Գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:»:

ՔԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանն արձանագրում է, որ հայցը ամբողջությամբ բավարարելու պարա-գայում դատական ծախսը պետք է կրի Պատասխանողը, որից ենթակա է բռնագանձման Հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-ր, 362-րդ հոդվածներով

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ագաստ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ պատասխանող «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ բավարարել. «Իջևանի բժշկական կենտրոն»ՓԲԸ կողմից վերջինիս և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 03.01.2024 թվականին կնքված թիվ «ԻԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-4» ծածկագրով պայմանագրի 24.06.2024 թվականին կայացված թիվ 333 ծանուցման միակողմանի մասնակի լուծումը ճանաչել անվավեր

2. Որպես դատական ծախս «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից հօգուտ «Ագաստ» ՍՊԸ-ի բռնագանձել՝ 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Միսեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am